Ազդարարության փող
Trumpet's Sound

52-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎՍՏՐԱԼԻԱ
ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2021

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ-որ բան պակաս է ..... Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Կանոններ և հարաբերություններ ..... Նեյլ Բուքման

Եղիայի աղոթքները (2) ..... Ռեքս Տիրլավ

Սաղմոսների եռաբանություն (2) ..... Դոն Սթորմըր

Գառնուկն ու կնիքները (3) ..... QMBC պանորամա

Լսող Աստվածը ..... Քաղված

Իմ ուզածն էլ հենց դա է ..... Վեր. Հովսեփ Հովսեփյան

Ի՞նչ նշանակություն ունի Աստծո Խոսքն ինձ համար ..... Դոկտ. Զեսլով Բասսարա

Խառնիճաղանջ սենյակս ..... Քաղված

Բարի Հովիվը ..... Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Ինչ-որ բան պակաս է

Այսօր, աշխարհին նայելով, հասկանում ենք, որ ինչ-որ բան պակաս է, բայց շատերը չգիտեն, թե ինչն է այդ: Արդյոք այս իրավիճակի պատճառը համաճարա՞կն էր, թե՞ ինչ-որ տեղ մեր խաղաղությունը կորցնելը: Ո՛չ, մենք կորցրինք մեր սերը, կորցրինք Աստծո հանդեպ մեր սերը:

Շատ երգիչներ գեղեցիկ երգում են սիրո մասին, բայց արդյո՞ք իսկապես ճանաչում են սերը: Ո՞րն է սիրո աղբյուրը, ո՞վ է այն տալիս:

Աստվածաշունչը միակ Գիրքն է, որ հստակ սովորեցնում է այս. Աստված սեր է: Աստված պարզապես սիրող չէ, այլ Իր ամբողջ էությամբ սեր է: Նա ամբողջությամբ և կատարյալ կերպով է սիրում: Սերը Աստծուց է: Նա է աղբյուրը, սերը Աստծո սրտից է բխում: Մենք որևէ այլ բան կամ անձ փնտրելու կարիք չունենք: Նա մեզ սիրեց, երբ մենք դեռ մեղավոր էինք, Նա ուղարկեց Իր Որդուն՝ մեռնելու մեր փրկության համար:

Աստված՝ երբևէ ամենահզոր էակը, տիեզերքը ստեղծողը, անձամբ սիրում է ձեզ: Փորձե՛ք խորապես մտածել սրա մասին: Նա սիրում է ձեզ և ոչ միայն ընդհանուր առմամբ բոլոր մարդկանց է սիրում, այլ անձամբ ձեզ: Նա հոգ է տանում ձեր կյանքի մասին և ուզում է դառնալ նրա մի մասը: Նույնիսկ եթե ամբողջ կյանքում խուսափել եք Աստծուց կամ այնպիսի բաներ եք արել, որոնց համար զղջում եք, Նա տակավին սիրում է ձեզ և ուզում է ձեզ հետ հարաբերություն ունենալ:

Աստծո սերը անպայմանական և անսահման է. այն շատ ավելին է, քան ամենաընդունակ մարդկանց սերը: Աստված Իր հետևորդներին պատվիրում է սիրել միմյանց:

Ի՞նչ է ասում Աստվածաշունչը

«Ի՜նչ գերազանց է Քո գթասիրությունը, ո՛վ Աստված. դրա համար մարդկանց որդիները Քո թևերի հովանուն են ապավինում» (Սաղ. 36:7):

«Եվ հիմա մնում է հավատ, հույս, սեր՝ այս երեքը, և սրանցից մեծագույնը սերն է» (Ա Կորնթ. 13:13):

«Սիրելինե՛ր, սիրենք միմյանց, քանի որ սերն Աստծուց է, և նա, ով սիրում է, Աստծուց է ծնված ու ճանաչում է Աստծուն» (Ա Հովհ. 4:7):

«Ես Քրիստոսի հետ խաչը ելա: Այսուհետև ո՛չ թե ես եմ ապրում, այլ Քրիստոսն է, որ ապրում է իմ մեջ: Եվ այն կյանքը, որ այժմ ապրում եմ մարմնով, Աստծո Որդու հավատով եմ ապրում, որ ինձ սիրեց և Իրեն ինձ համար տվեց» (Գաղ. 2:20):

Ինչպե՞ս ստանամ այս սերը: Ապաշխարությամբ ե՛կ Տեր Հիսուսի մոտ և խնդրի՛ր Նրան լցնել քո սիրտը Իր սիրով: Սերը վանում է վախը մեր սրտերից ու վերականգնում է մեզ Հիսուսի մեջ:

Մի՛ շփոթվի՛ր՝ մտածելով, թե ինչն է պակասում քեզ: Գիտակցի՛ր, որ Տեր Հիսուսի կարիքն ունես կյանքում:

Հ. Գ.

❊ ❊ ❊

Կանոններ և հարաբերություններ

Որոշ քրիստոնյաների համար հոգևոր կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ կանոնների պահպանում: Նրանք կարծում են, թե բարոյական կյանքով ապրելը բավարար է, ուստի իրենք իրենց համար որոշ կանոններ են սահմանում, որոնք առանց խնդրի ու դժվարության փորձում են պահպանել: Նրանք ոգելից խմիչք չեն օգտագործում, չեն ծխում, երդում չեն տալիս և զգույշ են գումարի նկատմամբ. զգույշ են նաև այն վաստակելու և պահպանելու նկատմամբ: Սակայն այդպիսի կյանքում երկու բան է պակասում. առաջին՝ հոգևոր կյանք, քանի որ զուտ բարոյական կյանքը հոգևոր կյանք չէ, և երկրորդ՝ Տիրոջ հետ հարաբերություն, որը նրանք չունեն, քանի որ միայն կանոններ են պահում: Յուրաքանչյուր անձ պետք է կարողանա տեսնել, որ

այդպիսի կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեր բարձր կոչման աղքատիկ ու մահացու նմանակումը: Կանոնները երբեք չեն կարող փոխարինել հարաբերություններին:

Այնուամենայնիվ, մենք գիտենք, որ անձնական կարգապահությունը շատ օգտակար է քրիստոնյայի համար, և այն պահանջում է որոշ կանոնների պահպանում: Դրանք կարող են դրական կամ բացասական լինել. «Ես այս բանը պետք է անեմ» կամ «Ես այս բանը չպետք է անեմ»: Այնուամենայնիվ, սրանք կանոններ են, և միայն դրանց վրա կենտրոնանալը մեծ վտանգ է պարունակում իր մեջ:

Վտանգն այն է, որ դուք սկսում եք մտածել, թե Աստծո հետ ձեր ունեցած խաղաղության հիմքը ոչ թե Տեր Հիսուսն է, այլ կանոնները: Եթե բարիք գործեք, ուրեմն օրհնված եք ու Աստծո առջև ուղիղ եք, բայց եթե մի քիչ սայթաքեք կամ հանգստանաք, ձեր խաղաղությունը կվերանա: Երբ այսպես մտածեք, յուրաքանչյուր կարգապահություն ծանր կթվա, իսկ Աստված՝ որպես անկարեկից ղեկավար և ոչ թե Երկնավոր Հայր:

Ուստի այս սխալից զերծ մնալու համար մենք պետք է գրեթե մոլեռանդորեն կառչենք Քրիստոսի փառահեղ Ավետարանից, որտեղ նշված է, որ մեր արժանիքները արժեք չունեն, և որ Իր զոհաբերությունն է ամենակարևորը: Միայն այդ զոհաբերությամբ կարող ենք հաշտվել Աստծո հետ: Աատծո հետ հաշտությունը երբեք մեր արժանիքով կամ առաքինությամբ ձեռք չի բերվում: Ամբողջական, կատարյալ և հավիտենական հաշտեցումը կատարվեց Նրա արյան և հրաշափառ հարության զորության միջոցով: Մենք հավատքի միջոցով Նրա հետ մեր ունեցած հարաբերության շնորհիվ ապահով հիմք ու լիակատար փրկություն ունենք:

Ուրեմն ինչո՞ւ ընդհանրապես զբաղվել անձնական կարգապահությամբ: Քանի որ մեր փրկությունը ավարտված չէ, մենք անհամբեր սպասում ենք մարմնի խոստացված հարությանը, երբ Տերը վերադառնա: Միևնույն ժամանակ մենք երեք թշնամի ունենք, որոնց հետ պետք է պայքարենք. առաջինը՝ աշխարհը, որը շարունակում է Հիսուս Քրիստոսին մերժել, երկրորդը՝ սատանան, որը փորձում է կործանել Նրա աշխատանքը, և երրորդը՝ մեր մեղավոր բնությունը, որը

նախընտրում է աստված լինել, քան երկրպագել Աստծուն: Անձնական կարգապահություն ունենալ նշանակում է ընթացիկ հոսանքին հակառակ լողալ. այն անհրաժեշտ է սովորելու, աճելու և Տիրոջը ծառայելու համար: Ոչ ոք չի կարող հոգևոր կյանք ապրել առանց այս կարգապահության: Պողոսը Տիմոթեոսին ուղղած իր նամակում խոսում է մարզիկների և զինվորների մասին: Այդ ժամանակվա հավատացյալները լավ էին հասկացել կարգապահության արժեքը:

Այնուամենայնիվ, մնում է մեկ կարևոր հարց. ինչպիսի՞ն է հոգևոր կյանքը:

Տէր Հիսուսը հոգևոր կյանքով ապրողի կատարյալ օրինակն է: Եթե ձեզ ասեն, որ վարքի որոշակի տեսակը Հոգուց է, ուրեմն պարզապես դուք ձեզ հարցրեք, թե արդյո՞ք Տեր Հիսուսը նման վարք էր դրսևորում: Սուրբ Գիրքը հստակ ասում է. «Նա, ով ասում է, թե Նրա մեջ է բնակվում, ինքն էլ պետք է քայլի այնպես, ինչպես Նա էր քայլում» (Ա Հովհ. 2:6):

Արդյո՞ք հոգևոր անձը ինքն իրեն շատ սուրբ և մաքուր է զգում: Ո՛չ, ի տարբերություն Տիրոջը՝ մենք ապականված և մեղավոր բնույթ ունենք, որի հետ ամեն օր պետք է գործ ունենանք, որպեսզի մեղքը «չթագավորի ձեր մահկանացու մարմինների մեջ» (Հռոմ. 6:12): Երբ շարունակեք Հոգով քայլել սովորել, ավելի կգիտակցեք ձեր ապականությունը: Այնուամենայնիվ, կսովորեք ազատվել նրա ազդեցությունից և կսկսեք սիրել ավելի ազատ և ավելի անձնուրաց: Մարդիկ ձեր կյանքում ավելի շատ Քրիստոսին կտեսնեն, բայց դուք ընդհանրապես չեք զգա, որ քրիստոսանման եք: Այնուամենայնիվ, կճաշակեք Նրա խաղաղությունը և ավելի ու ավելի կուրախանաք Նրանով: Ձեր բաժակը չափազանց կլցվի, բարերարությունն ու ողորմությունը ձեզ հետ կլինեն կյանքի բոլոր օրերում ու շատ օրեր Տիրոջ տանը կբնակվեք:

Նեյլ Բուքման

❊ ❊ ❊

Եղիայի աղոթքները (2)

Գ Թագ. 16-18

Անկեղծ աղոթք

Եղիան մարտահրավեր նետեց ապստամբ ազգին, այնուհետև մի կնոջ՝ Հեզաբելի երեսից վախեցած՝ փախչեց: Նա իր կյանքի համար վազեց դեպի հեռավոր հարավ՝ Բերսաբե: Այստեղ թողեց իր ծառային, անապատում մեկ օրվա ճամփա գնաց, մի գիհիի տակ նստեց և սրտանց մեռնել ուզեց: Գիհին փոքր ծառ է, որը մեծ տերևներ չունի, հետևաբար ծառի տակ նստողին նա շուքով չի ապահովում:

«Հերիք է, ո՛վ Տեր, ա՛ռ իմ հոգին, քանի որ ես իմ հայրերից ավելի լավը չեմ»: Հիմա կարո՞ղ եք տեսնել, թե ինչու էր Եղիան մեզ նման սովորական մարդ: Նա հաղթանակի բլրի գագաթից ընկավ ընկճվածության հովիտը: Վերջին օրերը լցված էին հուզական սթրեսով. վախ և ֆիզիկական ուժասպառություն կար: Ինչո՞ւ նա հուսահատվեց: «Իմ հայրերից լավը չեմ», - մտածում էր նա: Նա այնքան էլ ուժեղ չէր, որքան կարծում էր: Այդ տկար պահին Եղիան աղոթեց: Այս աղոթքից շատ բան ենք սովորում Եղիայի՝ Աստծո հետ ունեցած հարաբերության մասին: Կարո՞ղ եք նրա նման աղոթել. «Աստվա՛ծ, ես կուշտ եմ: Կյանքը պարզապես չափազանց ցավոտ և բարդ է: Ես կարծում էի, որ բարձր տեղում եմ, բայց հիմա ամեն ինչ սխալ է ընթանում, պարզապես առաջ շարժվելու ճամփա չկա»: Ի՞նչ է ձեր կարծիքը. արդյոք կարծում եք, թե Աստված կզայրանա՞ ձեզ վրա, եթե այսպես աղոթեք:

Սա սովորեցնում է մեզ աղոթքի և Աստծո հետ մեր հարաբերությունների ամենահիմնական սկզբունքներից մեկը՝ անկեղծությունը:

Աստծուն ճանաչողները գիտեն, որ Նրա սերը ուժգին է: Նրանք նաև գիտեն, որ Նա ատում է սուտը:

- Եթե վատ եք զգում, Նրան մի՛ ասեք, որ հոյակապ եք զգում: Ասե՛ք, որ վատ եք:
- Եթե մտահոգված եք, Նրան մի՛ ասեք, որ լուռ վստահում եք Նրա

հավատարմությանը: Ասե՛ք, որ անհանգիստ եք:

- Եթե տխուր եք, Նրան մի՛ ասեք, որ ուրախ եք: Ասե՛ք, որ տխուր եք:
- Եթե կարծում եք, որ Նա ձեզ թողել է, ասե՛ք Նրան, որ այդպես եք զգում:

Սա անկեղծ և իսկական աղոթք է: Պատմե՛ք Աստծուն այն, ինչ կատարվում է ձեր ներսում: Նա կարող է հասկանալ: Աստծո և ձեր միջև յուրաքանչյուր կարևոր գործարք սկսվում է անկեղծությունից: Երբ սա հասկանաք, կսկսեք առաջ շարժվել:

Հոբը Աստծուն պատմեց իր զգացումները, և Աստված ցույց տվեց նրան առաջ գնալու ճամփան: Եղիայի հուսահատ աղոթքը դարձավ կյանքի բոլորովին նոր փուլի սկիզբը: Աստված Եղիայի մեռնելու խնդրանքին պատասխանեց վճռական «ոչ»-ով: Սա աղոթքի հրաշքն է: Աստված մեզ չի տալիս այն ամենը, ինչ խնդրում ենք Իրենից, քանի որ հաճախ խնդրում ենք այնպիսի բաներ, որոնց համար հետո զղջալու ենք:

Աստված պատասխանեց Եղիայի անկեղծ աղոթքին Իր կամքի համաձայն և ոչ թե Եղիայի ակնկալածով: Աստված հրեշտակ ուղարկեց Եղիային կերակրելու համար: Սա հրաշալի ձևով ցույց է տալիս, թե ինչպես է Աստված նրբանկատորեն մեզ հետ վարվում, երբ կյանքի ցածր տեղերում ենք գտնվում: Եղիան իսկապես հուսահատ էր: Ինչպե՞ս վարվեց Աստված Եղիայի հետ: Երբ Եղիան ընկած վիճակում էր, Աստված նրան ոչ թե ավելի քիչ ուշադրություն դարձրեց, այլ ավելի շատ:

Որքան ընկած էր Եղիան, այնքան ավելի սեր և ուշադրություն ստացավ Աստծուց: Եղիայի անկեղծ աղոթքը իր ճանապարհորդության մեջ ապաքինման և կազդուրման նոր գործընթացի սկիզբ էր: Անկեղծորեն աղոթելու սկզբունքը կենսական նշանակություն ունի, եթե իսկապես փափագում եք, որ Աստված պատասխանի ձեր աղոթքներին:

Սովորե՛ք անկեղծությամբ աղոթել ու լսել Աստծուն: Այդպիսով դուք թույլ կտաք, որ Աստված ցույց տա ձեզ այն, ինչ կատարվում է

ձեր կյանքում: Այդ մտերիմ հաղորդակցության ժամանակ Աստված սկսում է վերափոխել ձեզ: Նա ցույց կտա, թե որքան հիանալի կերպով ամեն բան Իր վերահսկողության տակ է: Եվ Եղիայի պես դուք կբացահայտեք ձեր մասնակցությունը այդ հիանալի ծրագրում:

Սկսե՛ք այնտեղ, որտեղ գտնվում եք, բացե՛ք ձեր սիրտը և աղոթե՛ք այնպես, ինչպես կաք, և ոչ թե այնպես, ինչպես պետք է լինեք: Աղոթքի մեջ դուք կբացահայտեք, որ Աստված շատ ավելի լավն է, քան երբևէ պատկերացրել եք:

Ռեքս Տիրլավ

Սաղմոսների եռաբանություն (2)

Սաղմոս 23. Հովվի սաղմոսը

Այս սաղմոսի հանգամանքները բոլորովին տարբերվում են 22-րդ սաղմոսի սոսկալի հանգամանքներից: Այստեղ չենք կարդում թշնամիներից հալածված մի մարդու մասին, այլ նրա, ով մտածում է, թե ինչպես է Տերը քնքշորեն հոգում իր մասին: Սաղմոսերգիչը խնամված է այնպես, ինչպես հովիվն է խնամում իր ոչխարներին:

Դավիթը սաղմոսը սկսում է այն վստահությամբ, որ Տէրն իր հովիվն է: Լավ է մեզ համար, եթե կարողանանք ասել. «Տերը իմ Հովիվն է»: Մեզ պետք է մեկը, ով ունակ է կյանքի յուրաքանչյուր իրավիճակում հոգ տանել մեր մասին: Եթե Տերը մեր Հովիվն է, ապա մենք ոչ մի բանի կարոտություն չենք ունենա: Նա տալիս է մեզ այն ամենը, ինչ անհրաժեշտ է կյանքի և բարեպաշտության համար:

Հովիվը պառկեցնում է ոչխարներին խոտավետ արոտների մեջ: Բայց ինչպե՞ս կարող ենք ոչխարին պառկեցնել: Ոչխարները պառկում են միայն այն ժամանակ, երբ լիովին խաղաղ ու ապահով են զգում: Հոտը ոչ միայն պետք է լավ կերակրվի, այլև արտաքին սպառնալիքներից և առողջությունը վտանգող հիվանդություններից զերծ մնա:

Հովիվը նաև առաջնորդում է հանդարտ ջրերի մոտ: Ոչխարները հորդացող գետից ջուր չեն խմում, ուստի հոգատար հովիվն ապահովում է հոտի պատշաճ խնամքը: Մեր Հովիվը վերականգնում է մեր հոգիները և առաջնորդում մեզ արդարության ուղիներով: Նա մեզ տանում է միայն այն վայրերը, որոնք բարենպաստ են մեզ համար:

Քանի որ Հովիվը մեզ հետ է, մենք ոչ մի բանից չենք վախենում: Նա նույնիսկ մահվան շուքի ձորում է: Մենք մեզ հիշեցնում ենք, որ քրիստոնյաների համար մահը խավար ձոր չէ: Այն մահվան շուքի ձորն է: Եթե շուք կա, ուրեմն նաև լույս պետք է լինի, որպեսզի այդ շուքը ձևավորվի:

Հովիվը պաշտպանում և խնամում է իր գավազանով ու ցուպով: Արևելյան հովիվը իր գավազանն օգտագործում է ոչխարների վրա հարձակման փորձ անող թշնամիներին հետ մղելու համար: Նա իր ցուպն օգտագործում է, որպեսզի փրկի դժվարության մեջ հայտնըված ոչխարներին՝ նրանց մխիթարություն տալով:

Մենք ապահովված ենք մեզ համար անհրաժեշտ ամեն ինչով: Նույնիսկ մեր թշնամիների ներկայությամբ մենք ապահովված ենք անհրաժեշտ ամեն ինչով: Մեր գլուխը յուղով օծված է, և մեր բաժակը խիստ լիքն է:

Սաղմոսերգիչն ապագային վստահությամբ է նայում, քանի որ գիտի, որ բարությունն ու ողորմությունը իրեն պիտի հետևեն կյանքի բոլոր օրերում, ու շատ օրեր Տիրոջ տան մեջ պիտի բնակվի: Թափառական վիճակները վերջ կգտնեն ու վերջապես մեր տուն կհասնենք:

Մեզ համար շատ կարևոր հարց կա. արդյո՞ք ճանաչում եք այս Հովվին, արդյո՞ք անձնական կապ ունեք Նրա հետ, ով կյանքի յուրաքանչյուր իրավիճակում կարող է հոգ տանել ձեր մասին:

Սաղմոս 24. Գերիշխանի սաղմոսը

Սաղմոսի տրամադրությունը կրկին այլ է. ահա հաղթանակի ձայնը: Աստված հաղթական է բոլորի նկատմամբ: Երկիրն ու նրա մեջ եղած ամեն ինչ, ինչպես նաև նրա բնակիչները Աստծուն են պատկանում: Դավիթը մտածում է Աստծո ստեղծած աշխարհի մասին և խոստովանում Արարչի մեծությունը:

Արարչի մեծության մասին մտածելը հանգեցնում է այն հարցին, թե ո՞վ կարող է կանգնել Նրա առջև: Ո՞վ կարող է մոտենալ այդպիսի Սուրբին:

Ո՞վ կարող է բարձրանալ այնտեղ, ուր Տերն է, կամ կանգնել Նրա սուրբ տեղում: Ո՞վ կհամարձակվի մոտենալ այս վեհ Աստծուն: Դավիթը չորս հատկություն է թվարկում.

- Մաքուր ձեռքեր ունեցողը. նրա գործերը ճիշտ են: Հիշում ենք Հովսեփի եղբայրներին, ովքեր միասին գործեցին Հովսեփից ազատվելու համար: Տարիներ անց նրանց գործը գտավ նրանց:
- Մաքուր սիրտ ունեցողը. նրա շարժառիթները կասկածի տակ չեն դրվում: Միշտ չէր, որ Դավթի շարժառիթները մաքուր էին: Երբ սեփական մեղքը թաքցնելու ոչ մի հնար չկար, նա ծրագրեց Ուրիայի սպանությունը:
- Կուռքերին չերկրպագողը. Նա պաշտում է միայն Տեր Աստծուն: Իսրայելցիների՝ Եգիպտոսի ստրկությունից ազատվելուց անմիջապես հետո կռապաշտության դիմելը ցույց տվեց, որ նրանց սիրտը Աստծո հետ ուղիղ չէր:
- Ճշմարտությունն ասողը. նա սուտ երդում չի անում, և նրա մեջ կեղծավորություն չկա: Հիշում ենք Հակոբին, ով օրհնություն ստանալու համար խաբեց հորը: Բայց Աստված փոխեց Հակոբին: Կարող ենք հիշել Դավթին, ով Աքիմելեք քահանային խաբեց՝ ասելով, թե թագավորը շտապ գործով զբաղված է, այնինչ իրականության մեջ իր կյանքի համար էր փախչում:

Դավիթը նշում է, որ սրանք են այն մարդիկ, ովքեր ստանում են Տիրոջ օրհնությունն ու արդարությունը: Նրանք մարդիկ են, ովքեր Տիրոջ երեսն են փնտրում:

Հաղթական մուտքը

Մի անգամ Տերը, ավանակի վրա նստած, մտավ Իր քաղաքի դարպասներից ներս: Այստեղ սաղմոսերգիչն ավելի մեծ մուտքի մասին է խորհում:

Սովորաբար անձն իր գլուխը խոնարհեցնում է փառավոր մարդու

ներկայությամբ, բայց այստեղ դռները պետք է իրենց գլուխը վեր բարձրացնեն: Թագավորը ներս է մտնում. ո՞վ է այս Թագավորը:

- Նա փառաց Թագավորն է: Երկրի վրա Նա ծածկեց Իր փառքը մարդկանցից՝ բացառությամբ նրանցից, ովքեր հավատքով ընդունեցին, որ Ինքն է Մեսիան:
- Նա հզոր Տեր է: Նա ամենակարող է, որի առջև յուրաքանչյուր ծունկ պիտի խոնարհվի. ոչ ոք չի կարողանալու Նրան դիմադրել:
- Նա պատերազմում հզոր Տեր է: Տեր Հիսուսը խաչի վրա պատերազմի մեջ մտավ ու ջախջախեց նրան, ով մարդկանց մահվան վախի գերության մեջ էր պահում:
- Նա Զորաց Տերն է: Նա Իր տրամադրության տակ այնպիսի զորք ունի, որի քանակը հաշվել հնարավոր չէ: Նա տիեզերքի ղեկավարն է:

Թագավորի մեծության մասին խորհելով՝ պարզապես ոչինչ չի մնում մեզ անելու՝ բացի երկրպագությամբ խոնարհվելուց Նրա առջև, ով շնորհեց մեզ Իր սուրբ լեռը բարձրանալու արտոնությունը:

Թույլ կտա՞ք կրկին հարցնել. արդյոք թագավորների Թագավորին հնազա՞նդ եք:

Դոն Սթորմը

❊ ❊ ❊

Եփեսացիներին 4:1-6

1. Ուստի աղաչում եմ ձեզ, ես՝ Տիրոջ համար բանտարկյալս, որ դուք այնպես քայլեք, ինչպես վայել է այն կոչմանը, որի մեջ կանչվեցիք,

2. ամենայն խոնարհությամբ, հեզությամբ և համբերատարությամբ, սիրով իրար հանդուրժելով,

3. ջանալով Սուրբ Հոգու միաբանությունը պահել խաղաղության կապով:

4. Մե՛կ մարմին, մե՛կ Հոգի, ինչպես մե՛կ հույսով կանչվեցիք ձեր կոչմանը,

5. մե՛կ Տեր, մե՛կ հավատ, մե՛կ մկրտություն,

6. մե՛կ Աստված, Հայր բոլորի, որ բոլորի վրա է, բոլորի հետ և ձեր բոլորի մեջ:

Գառնուկն ու կնիքները (3)

Անցած համարները (15-17) ցույց են տալիս, որ ոչ ոք Աստծո արդար դատաստանից չի կարողանալու ազատվել սեփական արժանիքներով: Թագավորները, մեծամեծները, հրամանատարները, հարուստները, հզորները և նույնիսկ ստրուկն ու ազատ մարդը չարչարվելու են Աստծո ձեռքում: Ցավոք, նրանք ճանաչելու են Աստծուն, բայց ոչ որպես Փրկչի: Նրանք հրաժարվելու են իրենց մեղքերից ապաշխարելուց: Ողորմության համար Աստծուն աղաղակելու փոխարեն նրանք դիմելու են լեռներին ու ապառաժներին՝ ասելով. «Ընկե՛ք մեզ վրա, ու ծածկեցե՛ք մեզ Նրա երեսից, որ գահի վրա է նստում, ու նաև Գառնուկի բարկությունից. որովհետև եկել է Նրա բարկության մեծ օրը. և ո՞վ կարող է կանգնել» (Հայտ. 6:16-17):

Մեծ նեղության ժամանակաշրջանում մարդկանց մասշտաբային սպանությունն ու երկրի կործանումը հանգեցնելու է հետևյալ տրամաբանական հարցին. ինչո՞ւ էր Աստված թույլ տալիս, որ դրանք տեղի ունենան, և Մեծ նեղության ժամանակաշրջանի 2-րդ կեսին ինչո՞ւ է Նա ուղղակիորեն թափելու Իր բարկությունը երկրի վրա: Ի պատասխան այս հարցերին՝ կարող ենք առաջարկել երկու պատճառ.

1. Բ Օր. 7:10-ում կարդում ենք. «Հատուցում է Իրեն ատողներին իրենց երեսին՝ նրանց կործանելով. Իրեն ատողի պատիժը չի ուշացնում, նրա երեսովն է տալիս»: Տեր Հիսուսը հրեաների մասին ասաց. «Առանց պատճառի Ինձ ատեցին» (Հովհ. 15:25): Ավելին՝ հրեաները մեղավոր են իրենց Մեսիային մահապատժի ենթարկելու մեջ (Գործք 2:23, 3:13-15): Հետևաբար հրեա ժողովուրդը պետք է խստորեն պատժվի: Բայց Մեծ նեղության վերջում նրանք ապաշխարելու են. «Նրանք ինձ պիտի նայեն, ում խոցեցին» (Զաք. 12:10, հմմտ. Հայտ. 1:7): «Ամբողջ Իսրայելը պիտի փրկվի» (Հռոմ. 11:26): Այնուհետև Աստված կկարողանա իրականացնել Աբրահամին, Իսահակին և Հակոբին տված Իր բոլոր խոստումները:

2. Գաբրիել հրեշտակապետը Դանիելին ուղերձ հղեց՝ ասելով, որ 490 տարի (ներառյալ Մեծ նեղության 7 տարիները) իր ժողովրդի (հրեաներ) և նրա սուրբ քաղաքի (Երուսաղեմ) համար հրամանագիր է կնքվել «հավատուրացությունն ավարտին հասցնելու, մեղքերին վերջ տալու, անօրենությունը քավելու ու հավիտենական արդարություն բերելու, տեսիլքն ու մարգարեները կնքելու և Ամենասուրբին օծելու համար քո ժողովրդի և քո սուրբ քաղաքի վրա յոթանասուն յոթնյակ է սահմանված» (Դան. 9:24): Որոշ մարդիկ «Ամենասուրբին օծելու» արտահայտությամբ հասկանում են Հազարամյակի տաճարը, որը նախապատրաստվելու և օծվելու է Քրիստոսի Հազարամյա թագավորության համար:

5. 144,000 ծառաներն ու մեծ բազմությունը (7:1-17)

Այժմ գալիս ենք երեք դադարներից առաջինին, իսկ մյուս երկուսը գտնվում են 10:1-11:14-ում և 16:13-16-ում:

Վեցերորդ կնիքի բացումից հետևող քաոսն ու կործանումը տեսնելուց հետո Հովհաննեսն ավելի խաղաղ տեսարան է տեսնում. չորս հրեշտակներ կանգնած են երկրի չորս անկյուններում՝ այսինքն՝ հյուսիսում, հարավում, արևելքում և արևմուտքում, պահում են այն դատավճիռը, որը հասցնելու զորություն ունեն: Հրեա հավատացյալների ընտրյալ մի խումբ պետք է կնքվի, այնուհետև ուղարկվի Թագավորության Ավետարանը երկրի բոլոր ազգերին, այսինքն՝ հեթանոսներին քարոզելու համար: Արդյունքում՝ հեթանոսներից շատերը հավատալու են ու փրկվելու են:

Քրիստոնյաներն այսօր Սուրբ Հոգով կնքված են փրկագնման օրվա համար (տե՛ս Եփես. 4:30-ը), սակայն կենդանի Աստծո կնիքը դրվելու է հրեա նորադարձների այս ընտրված խմբի ճակատին (Հայտ. 7:2-4): Այսպիսով նրանք պաշտպանվելու են աշխարհի պատմության ամենավտանգավոր ժամանակում, և հեթանոսների այդ մեծ բազմությունը, ամենայն հավանականությամբ, փրկվելու է նրանց քարոզչության շնորհիվ:

Մեծ Նեղության ժամանակաշրջանում շատ մարդկանց հավատացյալ դառնալու փաստը վկայում է այն բանի մասին, որ Աստ-

ված դեռևս պատրաստ է ողորմություն ցուցաբերելու դատաստանի ժամանակ. «Ողորմությունը գերազանցում է դատաստանին» (Հակ. 2:13): Մեծ նեղությանն անդրադառնալով՝ Տեր Հիսուսն ասաց. «Եվ արքայության այս Ավետարանը պիտի քարոզվի ամբողջ աշխարհում՝ բոլոր ազգերին վկայություն լինելու համար, և այն ժամանակ վերջը պիտի գա» (Մատթ. 24:14): Բայց ովքե՞ր են քարոզելու այն:

Այսօր քրիստոնյաները վկայում են հրեաներին: Քրիստոնյաների հափշտակությունից հետո այդ հրեաներից ոմանք հավատացյալ են դառնալու կամ գուցե հոգևոր գրականություն են կարդալու ու պատգամին հավատալով՝ փրկվելու են: Փրկվածների թվում կլինեն 144,000 հավատացյալ հրեաները, որոնք Աստծո կողմից ընտրված են լինելու որպես Մեծ նեղության շրջանի երկրորդ կեսի Իր վկաներ:

Մենք միշտ պետք է հիշենք, որ Աստված իրագործում է Իր հավիտենական նպատակը, և սա պատկերավոր ներկայացված է Երեմ. 31:33-40-ում: Այս մարգարեությունից սովորում ենք, որ ժամանակ է գալու, երբ Աստված Իր օրենքը դնելու է ողջ Իսրայելի մտքում ու սրտում: Նա ներելու է նրանց չարությունը և այլևս չի հիշելու նրանց մեղքերը: Իսրայելի ապագան ապահով է, և Աստված երբեք չի մերժելու նրանց: Այս ամենը ասվում է ամբողջ ազգի մասին, բայց որոշ իսրայելացիներ մերժելու են Ավետարանը ու դատապարտվելու են:

144,000 հավատացյալ հրեաները Թագավորության Ավետարանը քարոզելու են երկրի բոլոր ազգերին, ինչը հանգեցնելու է հեթանոսների մեծաքանակ փրկությանը: Նրանցից շատերը կբռնվեն ու դաժանորեն կսպանվեն, բայց նրանց հոգիները կլինեն Երկնքում՝ սպասելով իրենց հարուցյալ մարմիններին (հմմտ. Հայտ. 6:9-11): Այնուամենայնիվ, կենդանի է մնալու «մի մեծ բազմություն, որ ոչ մեկը չէր կարող հաշվել՝ բոլոր ազգերից ու ցեղերից ու ժողովուրդներից ու լեզուներից» (Հայտ. 7:9):

Այս մեծ բազմության մասին ասվում է. «Սրանք այն մեծ նեղությունից եկածներն են, որ իրենց հանդերձանքը լվացին ու դրանք Գառնուկի արյամբ սպիտակեցրին» (Հայտ. 7:14): Այս համարը հստակ ցույց է տալիս, թե ինչպես փրկվեցին նրանք՝ իրենց վստահությունը դնելով Տեր Հիսուսի վրա, ով Գողգոթայում Իր արյունը թա-

փեց իրենց համար: Հիմա նրանք կարող են Աստծո ներկայության մեջ կանգնել (Հայտ. 7:9): Սա նախորդ գլխում անհավատների կողմից տրված հարցի պատասխանն է (Հայտ. 6:17):

Հեթանոս հավատացյալները փրկության համար փառաբանում են Աստծուն ու Գառնուկին (Հայտ. 7:10), և բոլոր հրեշտակները պաշտում են Աստծուն Իր ով լինելու համար (Հայտ. 7:12): 15-17-րդ համարները պատմում են այն փառահեղ վիճակի մասին, որը տիրելու է երկրում Մեծ նեղության շրջանի յոթ տարիներից հետո: Հատկանշական է, որ Գառնուկը լինելու է գահի կենտրոնում և հոգ է տանելու իր ժողովրդի մասին (Հայտ. 7:17, հմմտ. Հայտ. 3:21):

6. Գառնուկը բացում է յոթերորդ կնիքը (8:1-5)

«Ու երբ [Գառնուկը] բացեց յոթերորդ կնիքը, մոտ կես ժամով լռություն տիրեց երկնքում» (Հայտ. 8:1): Կարծես թե երկինքը վախեցավ երկրի վրա տեղի ունենալիքից:

Յոթերորդ կնիքի բացումով Աստծո առջև կանգնող յոթ հրեշտակների տրվելու է յոթ փող: Փողերի բարձր հնչյունը երկրի վրա Աստծո բարկությունը թափվելու հանդիսավոր հայտարարությունն է լինելու:

Նախքան փողերի հնչելը որոշ դեպքեր են տեղի ունենալու Երկընքում՝ խորանի մեջ (տե՛ս 8:2): Ոսկե խնկամանով մի հրեշտակ կանգ-նելու է զոհասեղանի առջև, գուցե պղնձե զոհասեղանի առջև՝ հիշեցնելով մեզ երկրային խորանի մասին, որտեղ զոհեր էին այրում: Այնուհետև նա մտնելու է Սուրբ տեղը, որպեսզի բոլոր սրբերի աղոթքների հետ այն մատուցի գահի առջև գտնվող ոսկե զոհասեղանին: Եվ հրեշտակի ձեռքից խունկի ծուխը սրբերի աղոթքների հետ մեկտեղ Աստծո առաջ կգա: Թվում է, թե այս աղոթքներում Աստծո ժողովուրդը ջերմեռանդորեն Աստծուց խնդրեց դատապարտել աշխարհում եղած չարիքը (հմմտ. Հայտ. 6:10): Ու հրեշտակը վերցնելու է խնկամանն ու լցնելու է այն զոհասեղանի կրակով և գցելու է երկրի վրա. ու ձայներ, որոտումներ ու փայլակներ են լինելու, և երկրաշարժ:

Լսող Աստվածը

Կատուն ձագեր ունեցավ մեր ներքևի հարկի հյուրերի սենյակի մահճակալի վրա: Այս տեղը անհարմար համարելով՝ հավաքեցինք նորածին փիսիկներին ու դնելով տուփի մեջ՝ խոհանոցի վառարանի առջև տեղադրեցինք, մինչև որ ավելի լավ տեղ գտնեինք:

Սակայն մայր կատուն յուրահատուկ խորհուրդ ուներ: Զվարճությամբ դիտեցինք, թե ինչպես նա լռությամբ խոհանոց մտավ, ետևի թաթերի վրա կանգնեց, առջևի թաթերը տուփի վրա դրեց՝ հոտոտելով իր ձագերին: Ապա ցատկեց տուփի մեջ և փիսիկներին մեջքից բռնած՝ մեկ-մեկ ետ տարավ ներքևի հյուրասենյակի մահճակալի վրա: Միայն մեկ ձագ մնաց տուփի մեջ, բայց մաման ետ չեկավ: Միգուցե շատ հոգնեց կամ զբաղված էր ձագերին կերակրելով:

Սպասեցինք: Վերջապես տուփի հատակին մնացած փոքրիկ փիսիկը շշուկ հանեց, գրեթե անձայն ճիչ: Անմիջապես, առանց մլավելու մայր կատուն եկավ, իջավ տուփի մեջ և ամենափոքր ձագին բերնով բռնեց ու նրան տարավ հյուրասենյակ: Հեռվից՝ երեք դռնից, երկու սենյակից և երկու անցքից այն կողմ, նա լսել էր իր տկար ձագուկի ճիչը, որը նույնիսկ կանչ չէր:

Մեր աղոթքները շատ անգամ կատարյալ չեն և ոչ էլ հատուկ օգնության աղերսանքներ: Աստվածաշնչի համաձայն՝ Աստված պատասխանում է մեր հառաչանքներին, արցունքներին և մրմունջներին: Նույնիսկ մեր բաղձանքները կարող են որպես աղոթք մեկնաբանվել:

17-րդ դարի սուրբգրոց աստվածաբան Ջան Թրեբը, Սաղմոս 145-ը մեկնաբանելով, ասել է. «Տերը մոտ է բոլոր նրանց, ովքեր Իրեն կանչում են, Նա զգում է նրանց շունչը, երբ նրանք, մարած լինելով, չեն կարողանում ձայն հանել» (Սաղ. 145:18):

Ուստի աղոթենք, աղաղակենք կամ հառաչենք, Աստված մեզ լսում է և շտապում է օգնության հասնել:

«Օրհնյա՜լ լինի Տերը, որ լսեց իմ աղերսանքների ձայնը: Տերը իմ

զորությունն ու վահանն է. իմ սիրտը Նրան հուսաց, ու ես օգնություն գտա: Ուստի սիրտս մեծապես հրճվում է. և իմ երգով ես Նրան եմ փառաբանելու» (Սաղ. 28:6-7):

Հռութ Գրահամ

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից

Իմ ուզածն էլ հենց դա է

Սաղմոս 23

Կիրակնօրյա դպրոցի երեխաներից մեկին հարցնում են 23-րդ սաղմոսը: Նա վստահ ոտքի է կանգնում ու սկսում արտասանել. «Տերն է իմ հովիվը. իմ ուզածն էլ հենց դա է»: Սկզբում ծիծաղելի է թվում, բայց սաղմոսերգիչը հենց դա նկատի ուներ:

Շատերը չեն կարողանում հասկանալ և հավատալ, որ Քրիստոսը հոգում է մեր բոլոր կարիքները: Մի՞թե Նրա շնորհը միայն մեր կրոնական կարիքների բավարարման համար է, թե՞ Նա կարող է հոգալ մեր բոլոր կարիքները և մեր էությունը լցնել Իրենով:

23-րդ սաղմոսն ասում է. «Կարոտություն չեմ ունենա»: Այլ կերպ ասած՝ «Ես չեմ ունենա այնպիսի կարիք, որը Քրիստոսը չի կարող հոգալ»:

Ֆիզիկական կյանքում

«Կանաչ արոտավայրեր» արտահայտությունը խորհրդանշում է բարեկեցությունն ու ապահոված վիճակը: Աստված մեզ ստեղծել է որպես ֆիզիկական արարածների և գիտի մեր ֆիզիկական կարիքներն ու հոգ է տանում դրանց համար:

«Հոգս մի՛ արեք ձեր կյանքի համար, թե ինչ պիտի ուտեք և ինչ պիտի խմեք. և ոչ էլ ձեր մարմնի համար, թե ինչ պիտի հագնեք: Չէ՞ որ կյանքն ավելին է կերակուրից, և մարմինը՝ հագուստից» (Մատթ. 6:25):

Հուզական կյանքում

«Հանդարտ ջրերը» դժբախտաբար պակասում են մեր փլուզված հասարակության մեջ: Աշխարհը Աստծո ու նրա Խոսքի հոգեբանական զորության կարիքը երբևէ այսքան շատ չի ունեցել, ինչպես հիմա: Անհանգիստ մտքերը, հանցավորության զգացումները, նյարդային խանգարումները, վախերը, մտահոգությունները և մտավոր բոլոր հիվանդությունները կարող են խաղաղություն գտնել Աստծո հանդարտ ջրերի մոտ:

«Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, կպահպանի ձեր սրտերն ու մտքերը Հիսուս Քրիստոսի մեջ» (Փիլ. 4:7):

Հոգևոր կյանքում

Հոգին վերականգնվելու կարիք ունի: Այն ստեղծվել էր Աստծո հետ հաղորդակցվելու համար և կատարյալ էր, սակայն մարդը մերժեց Աստծուն և իր մեղավոր ճանապարհներով քայլեց: Միայն Հիսուս Քրիստոսը կարող է դա փոխել և հաշտեցում բերել:

«Սուրբ սի՛րտ ստեղծիր իմ մեջ, ով Աստված, և ուղիղ հոգի՛ նորոգիր իմ ներսում: Դարձյալ տո՛ւր ինձ քո փրկության ուրախությունը և կամավոր հոգով հաստատի՛ր ինձ» (Սաղ. 51:10, 12):

Բարոյական կյանքում

«Արդար լինել» նշանակում է ապրել ճիշտ, Աստծո կամքի համաձայն (Նելսոնի անգլերեն բառարանից): Այսօրվա հասարակության մեջ, ուր ամեն բան ողողված է և ամեն ոք տառապում է մեղք կոչված սարսափելի հիվանդությամբ, հեշտ չէ արդար ապրել: Բարոյական հարափոփոխ արժեքներ ունեցող աշխարհում ամեն բան ենթակա է փոփոխության: Պետք է լինի մեկ անփոփոխ չափանիշ. «Աստված է առաջնորդում ինձ»:

Հասարակական կյանքում

Մարդու կյանքում թշնամիների առկայությունն անխուսափելի է: Նույնիսկ Քրիստոսը թշնամիներ ուներ: Պարտադիր չէ, որ վատը լինես, որպեսզի թշնամիներ ունենաս: Տերը՝ մեր Հովիվը, օգնում է մեզ ճիշտ վարվելու մեր թշնամիների հետ:

Ներկայիս հասարակության մեջ հաջող հոգևոր կյանքն ու արդյունավետ վկայությունը հնարավոր են միայն այն դեպքում, եթե լցված լինենք Սուրբ Հոգով, ինչպես նկարագրվում է 23-րդ սաղմոսում:

Հաճույքի և հասարակական հաղորդակցության կարիքը հասկանալի ու բնական է մարդու համար: Սակայն նոր ծնունդի միջոցով սկիզբ առնող հոգևոր հաղորդակցությունն այնպիսի մեծ ուրախություն և հաճույք է պատճառում մարդուն, որը ծանոթ չէ աշխարհի և մարմնի մակերեսային ու ժամանակավոր հաճույքներով բավարարվող մարդկանց: Դավթի ուրախությունը պարզ է դառնում, երբ նա ասում է. «Իմ բաժակը խիստ լեցուն է»:

Ուրախ քրիստոնյան, որը երախտգիտությամբ ընդունել է «բարերարությունն ու ողորմությունը», բավարարված է լինում իր կյանքով, և բավարարվածության զգացումը նրան ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում:

«Ինձ համար կյանքը Քրիստոս է և մեռնելը՝ շահ» (Փիլիպ. 1:21):

Ճգնաժամի մեջ

«Մահվան ստվերի հովիտը» այն գինն է, որը բոլոր մարդիկ վճարում են կյանքի առանձնաշնորհի համար: Կյանքն ու մահը միասին են ընթանում: Երբ քայլում ենք այդ ստվերի հովտով, և մեր սիրելիները մեզ լքում են, Աստծո մխիթարությունը մեզ հետ է մնում: Նա արդեն քայլել է այդ ճանապարհով և գիտի, թե մեզ ուր է տանում: Մենք չպետք է վախենանք չարից, քանի որ Աստված մեզ հետ է:

«Ձեր սրտերը թող չխռովեն, Աստծո՛ւն հավատացեք և ի՛նձ հավատացեք:... Ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ ինձանով» (Հովհ. 14:1, 6):

Հավիտենական կյանքում

«Տիրոջ տունը» պատրաստ է նրանց համար, ում անունները գրված են կյանքի գրքի մեջ (տե՛ս Հայտ. 21:27):

Ի՞նչ է Երկինքը քեզ համար: Դու հավատո՞ւմ ես Երկնքին: Եթե հավատում ես, ապա քո կարծիքով արդյո՞ք այն նշանակում է ոսկեզօծ փողոցներ, մարգարտե դարպասներ, հասպիսե պատեր, թե՞

վերամիավորում սիրելիների հետ, հավիտենական հանգիստ և ուրախություն:

Երկինք ասելով՝ մենք նախևառաջ պետք է հասկանանք այն վայրը, որտեղ մեր Տերն է:

Մենք Նրա կարիքն ունենք. Նա հոգում է մեր բոլոր կարիքները: Մենք չպետք է ունենանք այն բաները, որոնք Նրանից չեն գալիս: Մեր Տերն ու Հովիվը գիտի մեր բոլոր կարիքները, և մենք հենց դրա կարիքն էլ ունենք:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

Ի՞նչ նշանակություն ունի Աստծո Խոսքն ինձ համար

«Ողջամիտ խոսքերի օրինա՛կն ունեցիր, որ ինձանից լսեցիր հավատով ու սիրով, որ Քրիստոս Հիսուսով է» (Բ Տիմ. 1:13):

1. Ողջամիտ խոսքերի օրինակ

«Ողջամիտ» արտահայտությունը Բ Տիմ. 1:13-ում նշանակում է ճարտարապետական նախագիծ: Վաղ ժամանակներում եկեղեցին հենց սկզբից ուներ վարդապետական հստակ ուրվագիծ: Դա այն չափանիշն էր, որով ողջ ուսմունքը չափվում էր: Տիմոթեոսը նախազգուշացվում է՝ չփոխել ուրվագծի բովանդակությունը: Եթե դա աներ, նա ոչինչ չէր ունենա, որով կկարողանար ստուգել այն ուսուցիչներին, ում հետ գործ էր ունենում: Մենք ապրում ենք 21-րդ դարում և կարիք ունենք ունենալու այն, ինչ Պողոս առաքյալը սովորեցրեց 1-ին դարում: Վաղ շրջանի եկեղեցական մի փիլիսոփայություն, որը ճանաչված էր որպես անտինոմիանիզմ, լայն ճանաչում գտավ: Այն ասում էր. «Մենք Օրենքի տակ չենք»: Այս միտքը այսօր չի մահացել: Կան մարդիկ, որոնք հայտարարում են, որ մենք շնորհքի տակ ենք, ո՛չ թե Օրենքի: Սա հայտարարում է, որ Նոր Կտակարանը «սի-

րո նամակների» հավաքածու է և ոչ թե օրենքի շարադրանք: Որոշները մերժում են, որը կոչվում է «ողջամիտ աստվածաբանություն»: «Ողջամիտ խոսքերի օրինակ» արտահայտությունը ցույց է տալիս, որ կա օրենք (տե՛ս Ա Կորնթ. 9:21, Գաղ. 6:2), որով մենք ապրում ենք:

2. Ունեցիր

Դարերի ընթացքում Աստծո գործը կատարվել է այն մարդկանց կողմից, ովքեր հաստատուն են կանգնել փորձության ժամանակ: Նրանց համար հեշտ կլիներ, եթե փոխհամաձայնության գային: Բայց նրանք հաստատուն մնացին: Պողոս առաքյալը նրանցից մեկն էր, ով փոխհամաձայնության չեկավ: Իր կյանքի վերջում նա որոշեց Քրիստոսով քաջալերել իր երիտասարդ եղբորը՝ Տիմոթեոսին: Ա Տիմ. 1:11-ում կարդում ենք, որ Աստված Պողոս առաքյալին տալիս է հոգևոր ճշմարտության ավանդը: Եվ առաքյալը այն փոխանցում է Տիմոթեոսին (Ա Տիմ. 6:20): Ըստ Բ Տիմ. 1:13-ի՝ այն դառնում է Տիմոթեոսի պատասխանատվությունը՝«ունենալու» և «պահելու» թանկագին ճշմարտության ավանդը և փոխանցելու այն ուրիշներին (Ա Տիմ. 2:2):

3. Ինձանից լսեցիր

Մենք հավատում ենք, որ Սուրբ Հոգին ճշմարտության Հոգին է: Նա Տիմոթեոսին հայտնում է ճշմարտությունը: Մենք միայն մեկ Սուրբ Հոգի և ճշմարտություն ունենք, որը գալիս է Նրանից: Մենք չենք հավատում երկու Սուրբ Հոգիների: Ուրեմն մենք չենք հավատում երկու կամ ավելի ճշմարտությունների: Աստված որոշեց ուղարկել Սուրբ Հոգուն, որ մեզ սովորեցնի ճշմարտությունը: Սուրբ Հոգու ծառայությունից դուրս մենք խավարում ենք: Առանց Նրա մենք անկարող ենք հասկանալ Աստծո Խոսքը: Մենք պետք է միշտ լինենք Նրա ուսուցման ներքո (Հովհ. 16:13): Նա մեզ կարողություն է տալիս ճշմարտությունը պահելու և կիսելու ուրիշների հետ:

4. Հավատ և սեր

Մենք նաև պետք է նկատենք, որ Տիմոթեոսի վարդապետությունը ներկայացվում է «հավատով և սիրով»: Նա պետք է ճշմարտությունը խոսեր սիրով, որովհետև այն Աստծո ձևն է: Եփես. 4:15-ում ասվում

է. «Սիրո մեջ ճշմարիտ լինելով...»: Որքան հեշտ է դեմ ելնել մեր ցանկություններին հավատը պահելու համար: Որքան հեշտ է դառնալ գուշակ, որը ճշմարտությունը փոխանցելու փոխարեն տալիս է ճշմարտության անձնական մեկնաբանությունը և խնդիրներ ստեղծում: Արդարացման և քրիստոնեական կյանքի վարդապետության մի համառոտ շարադրանք. «Հավատը մեզ դարձնում է տերեր, և սերը մեզ դարձնում է ծառաներ: Հավատը պետք է մի՛շտ ուղղված և կենտրոնացած լինի Տեր Հիսուս Քրիստոսի վրա: Այն ուղղակի խոսել չէ, հավատը եկեղեցին է կամ շնորհքի այլ նշանակությունը»:

5. Քրիստոս Հիսուսով

Բոլոր երկնային օրհնությունները հիմնված են միայն Քրիստոսի վրա: Հավատ գործնականորեն նշանակում է կենսական և փրկարար միությամբ հոգու միջոցով միացված լինել Փրկիչ Հիսուս Քրիստոսի հետ: Օրինակ՝ «Եվ նրա մեջ գտնվեմ ու ոչ թե իմ արդարությունն ունենամ, որ օրենքից է, այլ այն, որ Քրիստոսի հավատից է, այն արդարությունը, որ Աստծուց է հավատով» (Փիլիպ. 3:9):

Դոկտ. Չեսլով Բասսարա

Խառնիճաղանջ սենյակս

Երբ երրորդ անգամ տանս մաշած դուռը թակեցին, խավարի մեջ խարխափելով, ոտքս չորս կողմ նետված առարկաներին հարվածելով՝ գնացի այն բացելու: Վերջապես կողպեքը գտա և երբ դուռը բացեցի, անծանոթն ասաց.

- Մաքրության սպասարկում:

- Այո՛, համեցե՛ք, - ասացի՝ ձեռքս թափահարելով:

Նա չորս կողմը նայեց և սպասեց թելադրանքիս:

- Ամեն բան փորձել եմ, պարո՛ն, բայց անկարող եմ սենյակս կարգավորել: Դուք իմ վերջին հույսն եք: Նույնիսկ լույսը չեմ կարող վառել, - ասացի ես:

Նա մոտեցավ պատին, ձեռքը դրեց լույսի կոճակին և ասաց.

- Տղա՛ս, ուրախ եմ, որ ինձ կանչեցիր. միայն ես եմ, որ գիտեմ, թե լույսը որտեղ է:

Երբ ամեն կողմը լուսավորվեց, սենյակի խառնաշփոթն ավելի ընդգծվեց, ուստի ասացի. - Ուզում եմ, որ այս բոլոր անպետք բաները հանվեն այստեղից:

Մաքրության ծառայություն մատուցողը գլխով հավանություն տվեց ու գործի անցավ: Նախ գետնի փոշոտված և կոտրտված առարկաները հավաքեց ու նետեց: Դրանք իրեր էին, որոնք մի ժամանակ կարևոր էին համարվում, բայց հիմա՝ ոչ: Ապա մոտեցավ ինձ և հարցրեց.

- Պատի տակ գտնվող մետաղե կողպված սնդուկը ի՞նչ անեմ:

Զարմացա, որ գիտեր այդ սնդուկի մասին և բանալին էլ ուներ: Ակամա թույլ տվեցի, որ բացի այն: Երբ մեջինները տեսա, ուզեցի այն նորից կողպել, սակայն նա ասաց.

- Սրանք ի՞նչ են:

- Իրականում ավելորդ բաներ են, բայց ես սիրում եմ դրանք և ուզում եմ պահել:

- Բայց սրանք աղբ են: Եթե իսկապես ուզում ես, որ սենյակդ մաքրեմ, դրանք նույնպես պետք է դեն նետեմ:

Կմկմացի, դժկամեցի, բայց երբ ի վերջո համաձայնեցի, մի քանի վայրկյանից սնդուկն ու մեջինները անհայտացան: Դրանից հետո ծառայություն մատուցողը տան մյուս անկյուններն էլ զննեց ու ձեռքի գործը կատարյալ կատարեց: Հատակը փայլում էր, ու մետաղյա առարկաները շողում էին: Ավելորդ բան չէր մնացել, ամեն տեղ լուսավորվել էր մի քանի ժամում:

Դարձյալ մոտեցավ ինձ ու հարցրեց.

- Ուրիշ բան կա՞ անելու: Եթե ուզում եք, կարող եմ մի քանի տարբեր բաներ ևս անել:

Երբ համաձայնեցի, նա դարձյալ գործի անցավ: Այս անգամ

փոքր գրասենյակի դուռը բացեց և ձայներիզ դրեց նվագարանի մեջ: Ամբողջ տունը անուշ մեղեդիով լցվեց: Ապա պատուհանները բացեց, որ մաքուր օդը վայելենք, բույսեր և այլ զարդարանքներ տեղադրեց չորս կողմը: Ամեն բան շատ սքանչելի տեսք ուներ: Հետո տան ետևի մասը անցավ, վաղուց պահված վանդակներ բացեց. և հանկարծ ծիծեռնակներ ու թիթեռնիկներ սկսեցին թռչել առաստաղի մոտ: Ամբողջ մթնոլորտը փոխվեց: Նա ինձ մոտեցավ և ժպտալով ասաց.

- Հիմա ամեն բան շատ ավելի լավ տեսք ունի:

- Այո՛, հրաշալի է», - ասացի ծիծաղելով:

Ապա ծառայություն մատուցողը խնդրեց, որ իմ տանը մնա և ինձ հետ ապրի, սակայն առարկեցի.

- Ես սիրում եմ իմ ազատությունն ունենալ: Կարծում եմ՝ քո կարիքը չունեմ այլևս: Կարող եմ ամեն ինչ մաքուր պահել սրանից հետո:

- Բայց հիշո՞ւմ ես, որ ասացիր, թե ես եմ քո վերջին հույսը: Նույնիսկ լույսի կոճակը չէիր կարողանում գտնել խառնիճաղանաջ տանդ մեջ: Առանց ինձ բոլոր ավելորդ բաները կամաց-կամաց ետ են գալու:

Մեկ վայրկյան մտածեցի և հասկացա, որ ճիշտ է ասում:

- Լավ, կարող ես այստեղ մնալ և չորս կողմը մաքուր պահել, - ասացի:

Նա ժպտաց և շնորհակալությամբ գլուխը շարժեց: Գրասենյակս մտավ և տեղավորվեց: Նրան նայեցի երկյուղածությամբ ու հարգանքով հարցրի.

- Պարո՛ն, ձեր անունը չիմացա:

Նա ինձ նայեց և զգուշությամբ ասաց.

- Ես շատ անուններով եմ ճանաչված և շատ տեղեր եմ մաքրել: Քեզ ցույց կտամ, թե որտեղ կարող ես գտնել դրանք, - ժպտալով և ձեռքը ուսիս վրա դնելով՝ ասաց նա:

Հանկարծակի արթնացա: Քնել էի, և տեսածս երազ էր: Տեսա, որ Սուրբ Գիրքս, որ շատ վաղուց չէի կարդացել, գիրկս էր: Նայեցի Աստծո սրբազան Խոսքին և տեսա, որ էջերը թերթվել էին Հայտնություն Հովհաննու գրքին: Զարմանքով կարդացի 3:20-ը և իմացա, թե

ով էր երազիս մեջ խառնակ կյանքս մաքրագործել, կանոնավորել ու շտկել: Անմիջապես գլուխս խոնարհեցրի և խնդրեցի Նրան, որ իմ մնայուն մաքրագործողը, իմ հոգին մաքուր պահող Տերը լինի:

«Ահա Ես կանգնել եմ դռան մոտ ու թակում եմ. եթե մեկն Իմ ձայնը լսի և բացի դուռը. կմտնեմ նրա մոտ և կընթրեմ նրա հետ, և նա էլ՝ Ինձ հետ» (Հայտ. 3:20):

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից

Բարի Հովիվը

««Ես եմ բարի հովիվը». բարի հովիվը իր կյանքը տալիս է ոչխարների համար» (Հովհ. 10:11):

Սրանք շատ կարևոր խոսքեր են: Մեր Տեր Հիսուսից բացի՝ ոչ ոք չէր կարող ասել այս խոսքերը: Քրիստոսի այս խոսքերը նշանակում են, որ Նա իմ բարի Հովիվն է: Նա է ուղղում իմ քայլերը, Նա է իմ առաջնորդը, իմ պաշտպանը: ««Ես եմ բարի հովիվը». բարի հովիվը իր կյանքը տալիս է ոչխարների համար»: Ինչպիսի՜ հրաշալի Փրկիչ է Նա, որ պատրաստ էր և ուզում էր իր կյանքը ինձ համար դնելու: Տեր Հիսուսը պարզապես խոստում չտվեց. Նա խաչի վրա մահացավ իմ մեղքերի համար, որպեսզի ես ապրեմ: Այսօր ես ապրում եմ Քրիստոսի համար այն մեծ հույսով և ուրախությամբ, որ ես կլինեմ այնտեղ, որտեղ Նա է: Մենք հիանալի վստահություն ունենք: Եթե Քրիստոսի հանդեպ այս նույն հավատքն ունեք, ուրեմն դուք նույնպես օրհնված եք:

Հիշում եմ մի քանի տարի առաջ հայրենիք կատարած այցս, երբ որոշեցի հովիվ գտնել ու նրան երկու հարց ուղղել: Երկար ճանապարհ վարեցինք մեքենան, բայց չհանդիպեցինք որևէ հովվի: Հայաստանում մնալու օրերս գրեթե ավարտին էին հասել, բայց փառք եմ տալիս Տիրոջը, որ վերջին օրերում մի բլրի վրա հովիվ տեսա: Վարորդին խնդրեցի կանգ առնել և այդ բլուրը բարձրացա: Խեղճ

հովիվը զարմացած նայում էր, թե ինչու է անծանոթը շտապում իր հետ հանդիպելու: Ես մոտեցա նրան և ասացի.

- Աստվածաշնչի մասին երկու հարց ունեմ ձեզ տալու: Նախ՝ Հիսուսն ասաց. «Ես եմ բարի հովիվը»: Դուք բարի՞ հովիվ եք: Ի՞նչն է ձեզ բարի հովիվ դարձնում:

Խեղճ մարդը դեմքիս նայեց ու մի պահ մտածեց: Իմ հարցը շատ լուրջ ընդունեց, այնուհետև պատասխանեց.

- Ես բարի հովիվ եմ:

Ես հարցրի.

Ի՞նչն է ձեզ բարի հովիվ դարձնում:

Նա պատասխանեց.

Տեսե՛ք, այս հոտի բոլոր ոչխարներն իմը չեն: Նրանցից մի քանիսը հարևանինս են, բայց ես բոլորի համար հավասարապես հոգ եմ տանում: Ուստի կարծում եմ, որ բարի հովիվ եմ:

Ես ասացի, որ ուրախ եմ այսպիսի բարի հովվի հետ հանդիպելու համար, բայց շարունակեցի՝ ասելով.

- Ես մի հարց էլ ունեմ: Տեր Հիսուսն ասել է. «Բարի հովիվը իր կյանքը ոչխարների համար է տալիս»: Արդյո՞ք Տերն ուզում է ասել, թե բարի հովիվ կոչվելու համար պետք է ձեր կյանքը ոչխարների համար դնեք:

Նա մի պահ լուռ մնաց: Լրջորեն մտածեց, ապա բարձրաձայն ծիծաղեց՝ ասելով.

- Ո՛չ, ո՛չ, ես երբեք այս ոչխարների համար կյանքս չեմ տա:

Ես փառք եմ տալիս Տիրոջը՝ ասելով. «Տե՛ր Հիսուս, Դու ես միակ բարի Հովիվը»: Սիրելի՛ բարեկամ, այս Հովիվը Իր կյանքը դրեց քեզ համար, որպեսզի դու ապրես: Այս Հովիվը Իր արյունը թափեց մեղավոր տղամարդկանց և կանանց համար: Երբ մերժում ես Տեր Հիսուսին, դու մերժում ես Նրա կատարած հրաշալի աշխատանքը, մերժում ես Նրա թափած արյունը և այդպես անելով ասում ես, որ Նրա քավչարար արյունը չի կարող մաքրել քեզ: Սիրելի՛ բարեկամ,

եթե այդ որոշումը չկայացնես, դու կմեռնես քո մեղքերի մեջ, բայց եթե ճշմարտությունը ընդունես և Տեր Հիսուսին մոտ գալով՝ ասես. «Տե՛ր Հիսուս, Դո՛ւ ես իմ Հովիվը, ես միայն Քեզ եմ հետևելու ու միայն Քո ձայնն եմ լսելու, միայն Քո ճամփաներով եմ քայլելու, միայն Քո արոտավայրերում եմ արածելու», ապա կճաշակես Նրա փրկությունը և կունենաս հավիտենական կյանք Քրիստոսի հետ: Դու քո սրտում կունենաս Տեր Հիսուսի տված ուրախությունը, կժառանգես փրկության ուրախությունը:

Եկ Բարի Հովվի մոտ: Եկ ու նստի՛ր Նրա ոտքերի մոտ ու ճաշակի՛ր Քրիստոսի սերը: Թող Տերը օրհնի քեզ և օգնի բոլորիս՝ հասկանալու, թե որքա՜ն մեծ, որքա՜ն լայն և խորն է Տիրոջ սերը մեր նկատմամբ:

Հ. Գ.